



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

“ 30 ” ապրիլի 2011թ.

№ 83 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԶՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ԴՐԱ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.3, 1.21 և 1.24 կետերի դրույթներով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի մայիսի 20-ի «Զորահավաքային մարմինների օրինակելի կանոնադրությունը հաստատելու մասին» N591-Ն որոշման պահանջների, որոշում եմ՝

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի զորահավաքային մարմին՝ համաձայն N1 հավելվածի:


2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի զորահավաքային մարմնի կանոնադրությունը՝ համաձայն N2 հավելվածի:

3. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապանի, Գորիսի, Սիսիանի, Քաջարանի, Մեղրիի, Ագարակի, Դաստակերտի քաղաքային համայնքների և մարզի տարածքում գտնվող զորահավաքային առաջադրանքներ ունեցող կազմակերպությունների (անկախ սեփականության ձևից) ղեկավարներին.

1) Զորահավաքային առաջադրանքների կատարման համար ստեղծել զորահավաքային մարմիններ և դրանց անհատական կազմերը մեկամսյա ժամկետում ներկայացնել մարզի զորահավաքային մարմին:

4. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ



Ս.ԽԱԶԱՏՐՅԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնադրության (այսուհետև՝ կանոնադրություն) նպատակն է սահմանել «Սյունիքի մարզի զորահավաքային մարմնի իրավունքներն ու պարտականությունները, ենթակայությունը, խնդիրները և դրանց լուծման հիմնական ուղղությունները:
2. Զորահավաքային մարմինը ստեղծվում է «Սյունիքի մարզպետարանում, որի իրավասություններն իրականացնում են աշխատակազմի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումները և զորհավաքային մարմնում ընդգրկված մյուս պաշտոնատար անձիք:
3. Զորահավաքային մարմինը իր աշխատանքի ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով, «Սյունիքի մարզպետի որոշումներով և սույն կանոնադրությամբ:

II. ԶՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

4. «Սյունիքի մարզի զորահավաքային մարմնի հիմնական խնդիրներն են խաղաղ ժամանակ զորահավաքային նախապատրաստության և քաղաքացիական պաշտպանության աշխատանքների կազմակերպումը և համակարգումը:
5. Զորահավաքային նախապատրաստության խնդիրներին համապատասխան՝ զորահավաքային նախապատրաստության մասով իրականացնում է՝
 1. Զորահավաքային նախապատրաստության համակարգի ղեկավարումը, զորահավաքային նախապատրաստության ծրագրերի, պլանների մշակման աշխատանքների գիտամեթոդական, տեղեկատվական, մեթոդական և կազմակերպչական ապահովումը,
 2. Պետական պաշտպանական պատվերի (առաջադրանքի) կատարումն ապահովող միջոցառումների նախապատրաստումը, զորահավաքային առաջադրանքների կատարումն ապահովող միջոցառումների մշակումը, դրանց կատարման վերահսկումը և անրաժեշտության դեպքում՝ զորահավաքային նախապատրաստության միջոցառումների կատարման վերաբերյալ պետական լիազոր մարմնի ղեկավարին հաշվետվություն ներկայացնելը,
 3. Զորահավաքային պլանների կատարման և զորահավաքային ծավալման ուսումնական վարժանքների անցկացման կազմակերպումն ու իրականացումը,
 4. Սահմանված կարգով «Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի և աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումների զինապարտների հաշվառումը,

5. Սպառազինության և տեխնիկայի, կարևորագույն քաղաքացիական արտադրանքների, բնակչության կենսաապահովման համակարգերի, առավելագույն վտանգ ու ազգային արժեքներ ներկայացնող օբյեկտների փաստաթղթերի ապահովագրական ֆոնդի ստեղծումը,

6. Զորահավաքային առաջադրանքների (պատվերների) կատարման և խնդիրների իրագործման ժամանակ զորահավաքային պլանների համաձայն կազմակերպություններից կամ քաղաքացիներից շենքեր, շինություններ, հողամասեր, գույք, տրանսպորտային և այլ նյութական միջոցներ վերցնելու, ինչպես նաև նրանց տնտեսական գործունեության ուղղվածությունը փոփոխելու ժամանակ համապատասխան ակտերի կազմումը.

6. Քաղաքացիական պաշտպանության բնագավառում իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1. Քաղաքացիական պաշտպանության պլանների մշակման կազմակերպում և անհրաժեշտության դեպքում մասնակցություն դրանց մշակման աշխատանքներին.

2. Համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների հետ համատեղ քաղաքացիական պաշտպանության զարգացման և այդ նպատակի համար ներդրումների, նյութատեխնիկական միջոցների և աշխատանքային ռեսուրսների վերաբերյալ առաջարկությունների մշակում.

3. Քաղաքացիական պաշտպանության ղեկավար կազմի քաղաքացիական պաշտպանության գծով պատրաստման կազմակերպում.

4. Մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից քաղաքացիական պաշտպանության գծով պարտականությունների կատարման նկատմամբ հսկողություն.

5. Կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների աշխատողների կողմից իրականացվող քաղաքացիական պաշտպանության ոլորտի աշխատանքների համակարգում.

6. Ղեկավար մարմնի հանձնարարությամբ՝ կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների՝ քաղաքացիական պաշտպանության գծով գործունեության ուսումնասիրություններին մասնակցություն.

7. Սահմանված կարգով քաղաքացիական պաշտպանության վերաբերյալ ներկայացվող հաշվետվությունների վերլուծություն և դրա արդյունքները ղեկավարին ներկայացնելը.

8. Իր լիազորությունների սահմաններում, ինչպես նաև մարմնի ղեկավարի հանձնարարությամբ, առաջարկությունների, տեղեկանքների, հաշվետվությունների, զեկուցագրերի և այլ գրությունների նախապատրաստում.

9. Կառուցվածքային, տարածքային և առանձնացված ստորաբաժանումների աշխատողներին մասնագիտական հարցերի վերաբերյալ խորհրդատվական օգնության ցուցաբերում.

10. Քաղաքացիական պաշտպանության հարցերով անձնակազմի նախապատրաստության և քաղաքացիական պաշտպանության աշխատանքների կատարելագործման վերաբերյալ առաջարկությունների մշակում և ներկայացում.

11. Քաղաքացիական պաշտպանության ոլորտին վերաբերող այլ հարցերի համակարգում և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների կազմակերպում:

7. Զորահավաքային մարմինը իրավունք ունի՝

1. Առաջարկություններ ներկայացնելու զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի ու քաղաքացիական պաշտպանության աշխատանքների կատարելագործման վերաբերյալ.

2. Իր իրավասության սահմաններում հրավիրել խորհրդակցություններ,

3. Իր իրավասության սահմաններում համակարգել զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի ու քաղաքացիական պաշտպանության հետ կապված միջոցառումները:


III. ԶՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԱՂՏՆԻ ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

8. Զորահավաքային մարմնի կառուցվածքը և կազմը որոշվում է՝ ելնելով զորահավաքային նախապատրաստության աշխատանքների բնույթից և ծավալից:

9. Զորահավաքային մարմինը ենթարկվում է ՀՀ կառավարության կողմից լիազորված զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի աշխատանքները համակարգող պետական մարմնին:

10. Զորահավաքային մարմնի գաղտնի գործավարությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**ՀՀ Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար՝**



Ռ. Ղազարյան

Կազմ
Հայաստանի հարապետության Սյունիքի մարզի զորահավաքային մարմնի

Ս. Խաչատրյան	Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետ (զորահավաքային մարմնի ղեկավար)
Ա. Դոլունց	Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի տեղակալ
Վ. Գրիգորյան	Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի տեղակալ
Կ. Աղաջանյան	ՀՀ պաշտպանության նախարարության 1-ին բանակային կորպուսի հրամանատար
Պ. Պողոսյան	ՀՀ պաշտպանության նախարարության 4-րդ բանակային կորպուսի հրամանատար
Ա. Գալստյան	ՀՀ կառավարությանն առընթեր Ազգային անվտանգության ծառայության Սյունիքի մարզային վարչության պետ
Լ. Գրիգորյան	ՀՀ պաշտպանության նախարարության, Սյունիքի մարզի Կապանի տարածքային զինվորական կոմիսար
Մ. Պողոսյան	ՀՀ պաշտպանության նախարարության, Սյունիքի մարզի Գորիսի տարածքային զինվորական կոմիսար
Մ. Մկրտչյան	ՀՀ պաշտպանության նախարարության, Սյունիքի մարզի Սիսիանի տարածքային զինվորական կոմիսար
Դ. Անանյան	ՀՀ պաշտպանության նախարարության, Սյունիքի մարզի Մեղրիի տարածքային զինվորական կոմիսար
Գ. Կարապետյան	ՀՀ ոստիկանության Սյունիքի մարզային վարչության պետ, ՀՀ Սյունիքի մարզի քաղաքացիական պաշտպանության հասարակական կարգի պահպանության ծառայության պետ
Վ. Վարդանյան	ՀՀ Արմենթեյլ ՓԲԸ-ի Սյունիքի տարածքային կենտրոնի պետ, ՀՀ Սյունիքի մարզի քաղաքացիական պաշտպանության կապի և ազդարարման ծառայության պետ
Ա. Ուստաբաշյան	Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ, ՀՀ Սյունիքի մարզի քաղաքացիական պաշտպանության ինժեներական ծառայության պետ
Ա. Ծատրյան	Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ, ՀՀ Սյունիքի մարզի քաղաքացիական պաշտպանության բժշկական ծառայության պետ

Ս. Թանգյան Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ, ՀՀ Սյունիքի մարզի քաղաքացիական պաշտպանության բույսերի և կենդանիների պաշտպանության ծառայության պետ


Ա. Մարդյան Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ, ՀՀ Սյունիքի մարզի քաղաքացիական պաշտպանության առևտրի և սննդի ծառայության պետ

Ա. Աբգարյան Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության բնակարանային և ենթակառուցվածքների գործունեության բաժնի պետ, ՀՀ Սյունիքի մարզի քաղաքացիական պաշտպանության կոմունալ-տեխնիկական ծառայության պետ

Ս. Աղաբեկյան Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի պետ, ՀՀ Սյունիքի մարզի քաղաքացիական պաշտպանության տրանսպորտի ծառայության պետ

Ս.Ավետիսյան Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՎ վարչության պետ

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար՝



Ռ. Ղազարյան